ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՍՄԲԱՏՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՈԲԻԼԻԶԱՑՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԽՄԲԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

ԻԲ 00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ սոց. գիտ. թեկնածու, դոցենտ
Հ. Ռ. Վերմիշյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա. Վ. Աթանեսյան

սոց. գիտ. թեկնածու, դոցենտ
Ա. Գ. Բաբլոյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2026 թվականի փետրվարի 11-ին, ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի 013 մասնագիտական խորհրդի նիստում:
Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52 ա, ԵՊՀ:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2025 թվականի դեկտեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ
Ա. Լ. Ղարագուլյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Այս ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է երկու առումներով: Դրանցից առաջինը և գլխավորն այն է, որ սույն մեթոդաբանական աշխատանքն անդրադառնում է սոցիալական մոբիլիզացման հիմնախնդրին ձգձգված (անգլ.՝ protracted) և անհաղթահարելի (անգլ.՝ intractable) կոնֆլիկտների պայմաններում (Coleman, 2003): Երկրորդ առումով՝ աշխատանքին արդիականություն է հաղորդում իր էմպիրիկ համատեքստը. Ղարաբաղյան կոնֆլիկտը, որը տևում է արդեն ավելի քան երեք տասնամյակ և շարունակում է առանցքային դեր ունենալ հայաստանյան հասարակության կառուցվածքը և ներքին ու արտաքին հարաբերությունները պայմանավորելու տեսանկյունից (Ղևոնդյան, 2022), ընտրվել է որպես քննվող հիմնախնդրի՝ սոցիալական մոբիլիզացման տիպական համատեքստ՝ թույլ տալով հանգել սոցիալական մոբիլիզացման և դրա հիմքում ընկած բազմակողմանի գործընթացների մասին սոցիոլոգիապես իմաստալից մեկնաբանությունների: Արդի աշխարհում, որտեղ զինված կոնֆլիկտները, քաղաքացիական ընդվզումները և քաղաքական բռնությունն աստիճանաբար ավելի մեծ տարածում են գտնում (Davies, Pettersson, & Öberg, 2023), սոցիալական մոբիլիզացման հիմքում ընկած մեխանիզմների ըմբռնումը կարող է արժեքավոր պատկերացում տալ ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների, ինչպես նաև դրանց կարգավորման հնարավոր ուղիների մասին:

Ուսումնասիրությունն անդրադառնում է առկա գիտական և կիրառական հարացույցներին, տեսական մոտեցումներին ու քննարկումներին հասարակությունում հորիզոնական անհավասարությունների (անգլ.՝ horizontal inequalities), ինքնության հիմնախնդիրների և կոլեկտիվ դժգոհությունների (անգլ.՝ collective grievance) միջև այն փոխհարաբերությունների վերաբերյալ, որոնք կարող են պայմանավորել ժամանակակից աշխարհի կոնֆլիկտներից շատերը: Կոնֆլիկտային հասարակություններում կամավորական և քաղաքացիական շարժումների՝ որպես սոցիալական մոբիլիզացման օրինակների տարածվածությունը (Kaldor & Radice, 2022), որը հաճախ պայմանավորված է ոչ թե սոսկ ռացիոնալ հաշվարկներով, այլև կոլեկտիվ զգայական դրդապատճառներով (Smbatyan, 2021), ընդգծում է այս երևույթների սոցիոլոգիական ըմբռնման անհրաժեշտությունը: Դիտարկելով սոցիալական մոբիլիզացումը Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում՝ ատենախոսությունը արժեքավոր տեսական և գործնական պատկերացումներ է (Smbatyan, 2025) առաջարկում գիտնականների, քաղաքականություն մշակողների և կոնֆլիկտների կարգավորման մասնագետների համար, ովքեր ձգտում են ըմբռնել կոնֆլիկտների ժամանակ ձևավորվող հանրային տրամադրությունների և կոլեկտիվ վարքի յուրահատկություններն ու դրանք պայմանավորող հանգամանքները:

Միևնույն ժամանակ, կարևոր է հաշվի առնել, որ հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են մինչև 2022 թվականի ընթացքում, հետևաբար՝ ատենախոսության բացատրական ներուժը սահմանափակված է այդ ժամանակահատվածի հասարակության առանձնահատկություններում, և հեղինակը չի հավակնում աշխատանքի արդյունքներն ուղղակիորեն տարածել 2022-ից հետո

հայաստանյան հասարակության հետ տեղի ունեցած փոփոխությունների, այդ թվում՝ հնարավոր սոցիալական մոբիլիզացման դրվագների վրա:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում դիտարկվող, իրենց ծագմամբ ներքևից վերև ձևավորված սոցիալական մոբիլիզացման գործընթացներն են, այդ թվում՝ 1988 թ. Ղարաբաղյան շարժումը, ինչպես նաև 2016 և 2020 թթ. պատերազմներին ի արձագանք ձևավորված կամավորական շարժումները: Ընդ որում՝ աշխատանքի շրջանակներում սոցիալական մոբիլիզացումը սահմանվում է որպես գործընթաց, որի ժամանակ հասարակության անդամները կամ խմբերը ինքնաբուխ կերպով ներգրավվում են այնպիսի սոցիալական գործողություններում, որոնք (1) պարունակում են բարձր ռիսկայնություն, (2) ուղղված են որոշակի կոլեկտիվ նպատակի հասնելուն և (3) կարող են դրսևորվել որպես սոցիալական շարժում (Mironova & Whitt, 2020; Сикевич, 1999): Ուստի, այս հետազոտության օբյեկտի շրջանակներից դուրս են գտնվում կոնֆլիկտի համատեքստում ձևավորված այն կոլեկտիվ գործընթացները, այդ թվում՝ այլօրինակ մոբիլիզացումները, որոնք իրենց ծագմամբ ի սկբանե կազմակերպված կամ ուղղորդված են որևէ ինստիտուտի կամ դերակատարների կողմից (օր.՝ բանակի կամ պաշտպանական միավորումների կողմից ռազմական ռեսուրսների մոբիլիզացումը, քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի կողմից ռեսուրսների մոբիլիզացումը մարդասիրական նպատակներով):

Հետազոտության առարկան ներառում է կոնֆլիկտի համատեքստում սոցիալական մոբիլիզացման ծագման դրդապատճառները, ձևավորման գործընթացը և վերարտադրման դրսևորումները: Այս ասպեկտները դիտարկվում են անհատի մակարդակում քաղաքացիական մասնակցության դրդապատճառների, համայնքի մակարդակում՝ խմբային ինքնության և կոլեկտիվ զգայական և արժեքային դինամիկայի, իսկ կառուցվածքային մակարդակում՝ սոցիալական անհավասարությունների փոխազդեցության հատույթներում:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածն ընդգրկում է մինչև 2022 թվականը. հաջորդիվ տեղի ունեցած հասարակական փոփոխություններն այս աշխատանքում չեն դիտարկվում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության ընդհանուր նպատակն է սոցիոլոգիապես ըմբռնել և հայեցակարգել ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների պայմաններում ձևավորվող սոցիալական մոբիլիզացման ծագումնաբանությունը և վերարտադրման դրսևորումները՝ կառուցելով տեսամեթոդաբանական ուսումնասիրություն Ղարաբաղյան կոնֆլիկտի օրինակով: Սույն ուսումնասիրությունը միտված է նպաստելու ձգձգված կոնֆլիկտների համատեքստում սոցիալական մոբիլիզացման վերաբերյալ հասկացութային քննարկումներին և առաջարկելու դրա հասարակագիտական այնպիսի ըմբռնումներ, որոնք միաժամանակ և՛ համատեքստին հատուկ են, և՛ կարող են հանգել տեսական (և ոչ՝ վիճակագրական) ընդհանրացումների:

Այս հետազոտական նպատակին հասնելու համար ատենախոսությունը հետապնդում է հետևյալ խնդիրները.

1. Նկարագրել Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում ծագած սոցիալական մոբիլիզացման դեպքերը, այդ թվում՝ 1988 թ. Ղարաբաղյան շարժում, 2016 թ. «Քառօրյա» պատերազմի և 2020 թ. 2-րդ Ղարաբաղյան պատերազմի կամավորական շարժումներ.
2. Մեկնաբանել Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում սոցիալական մոբիլիզացման ծագումնաբանությունն ու ձևավորման գործընթացը, մասնավորապես նկարագրելով՝
   2.1. քաղաքացիական մասնակցության դրդապատճառները, բնույթը (արժեքային-ռացիոնալ երկդիմության լույսի ներքո) և դերը սոցիալական մոբիլիզացման ծագման ու պահպանման մեջ՝ անհատական (միկրո) կենսափորձի մակարդակում.
   2.2. կոլեկտիվ ինքնության ձևավորումն ու ամրապնդումը, կոլեկտիվ վերապրումները և համայնքային համախմբման արժեքանորմատիվ համակարգը կառուցակցող նարատիվները, սիմվոլներն ու պրակտիկաները՝ խմբային (մեզո) մակարդակում.
   2.3. կառուցվածքային (մակրո) անհավասարությունների դերը՝ կոլեկտիվ դժգոհություններ ձևավորելու, սոցիալական մոբիլիզացումը խթանելու և լեգիտիմացնելու տեսանկյունից՝ հորիզոնական անհավասարությունների տեսության ադապտացված ստուգման միջոցով.
3. Հայեցակարգել ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտի համատեքստում սոցիալական մոբիլիզացման վերարտադրման համապարփակ տրամաբանությունը՝ միկրո-մեզո-մակրո գործընթացային շղթայով:

Թեմայի տեսական հիմքերն ու գիտական մշակվածության աստիճանը: Թեմային առնչվող ակադեմիական գրականությունում հանդիպող գիտական մեկնաբանումները բազմազան են և բազմաղբյուր: Միևնույն ժամանակ, առկա գիտելիքի հիման վրա դժվար է նույնականացնել սոցիալական մոբիլիզացման մեկ ընդհանուր սահմանում (Голосеева & Хохлов, 2025), որն ամբողջությամբ կբովանդակեր այս աշխատանքի շրջանակներում սահմանված օբյեկտը: Նման սահմանափակումը հասկանալի և օրինաչափ է՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ այս աշխատանքում սոցիալական մոբիլիզացումը մեկնաբանման խիստ կոնկրետ համատեքստ ունի, որն է՝ ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտները: Ուստի, աշխատանքի տեսական հիմքերի քննման արդյունքում՝ հետազոտության ամենաառանցքային հասկացության՝ սոցիալական մոբիլիզացման[1] սահմանումը կառուցվում է հեղինակի կողմից՝ հիմնվելով գիտական գրականությունում հասանելի նյութի սինթեզման եղանակով՝ ըստ էության համադրելով առկա ակադեմիական աղբյուրներից հավաքագրված վերաբերելի գաղափարները: Ուստիև, արժե նկատի առնել այն հանգամանքը, որ «սոցիալական մոբիլիզացում» հասկացությունը ոչ միշտ է ուղղակիորեն նույնական ձևակերպմամբ հանդես գալիս այս ատենախոսությունում քննվող տեսական մոտեցումների

[1] **Նշում**. այս աշխատանքի շրջանակներում հեղինակի կողմից ներկայացվող դրույթներում հանդիպող «մոբիլիզացում» և «սոցիալական մոբիլիզացում» եզրույթները նույնական են և պետք է ընկալվեն ու մեկնաբանվեն միևնույն սահմանման շրջանակներում:

բնագրերում, քանզի երբեմն հասկացությունը հանդիպում է անուղղակի ձևակերպմամբ կամ հարակից հասկացությունների կիրառմամբ:

Բոլոր նման դեպքերում, այս աշխատանքը հիմնվում է այդ աղբյուրների վրա միայն այն պարագայում, երբ, անկախ կիրառված հասկացության ձևակերպական կառուցվածքից, դրա ներքո նկարագրվող երևույթը կամ վերջինիս տարրերը համապատասխանում են այս աշխատանքի օբյեկտի շրջանակներին և միաժամանակ սեմանտիկ հակասության մեջ չեն սոցիալական մոբիլիզացման՝ հեղինակի սահմանման հետ: Սույն աշխատանքը հենվում է սոցիալական շարժումներին և սոցիալական մոբիլիզացմանն անդրադարձող դասական և արդի մոտեցումների նպատակային համակցման վրա՝ ներառելով սոցիալական շարժումներին և կոլեկտիվ գործողությանը, մոբիլիզացման էմոցիոնալ և բարոյական շարժառիթներին, կառուցվածքային և ինստիտուցիոնալ նախապայմաններին, հորիզոնական անհավասարություններին և հարաբերական զրկանքին, ինչպես նաև ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտներին անդրադարձող հայեցակարգերի:

Աղյուսակ 1. Տեսական հիմքերը՝ խմբավորված ըստ թեմաների

Թեմա	**Առանցքային հեղինակներ**
Սոցիալական շարժումներ և կոլեկտիվ գործողություն	Parsons (1951); Coser (1956); Park & Burgess (1921/1984); McCarthy & Zald (1977); McAdam, Tarrow & Tilly (2001); Tarrow (2011); Tilly (2004); Oberschall (1973); Touraine (1981); Melucci (1996); Snow & Benford (1988); Benford & Snow (2000); Polletta & Jasper (2001)
Մոբիլիզացման էմոցիոնալ և բարոյական շարժառիթներ	Weber (1922/1978); Durkheim (1912/1995); Jasper (2011); Goodwin, Jasper & Polletta (2001); Wood (2003); Aminzade & McAdam (2001); Vigh (2008)
Կառուցվածքային և ինստիտուցիոնալ նախապայմաններ	Cederman, Gleditsch & Buhaug (2013); Stewart (2008); Østby (2008); Gurr (1970); Davies (1962); Edwards & McCarthy (2004); Bourdieu (1977); Swidler (1986)
Հորիզոնական անհավասարություններ և հարաբերական զրկանք	Cederman, Wimmer & Min (2010); Cederman, Weidmann & Gleditsch (2011); Stewart (2008); Østby (2008); Gurr (1970); Davies (1962)
Ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտներ	Crocker, Hampson & Aall (2005); Bar-Tal (2013); Smith & Vaux (2003); Cederman, Gleditsch & Buhaug (2013); Vigh (2008); Wood (2003)

Աշխատանքի միկրո-մակրո հայացքների համադրումից ելնելով՝ այս տեսական նյութը սինթեզվել է կառուցվածքային-ինստիտուցիոնալ և մշակութային-խորհրդանշական ճյուղավորումներով: Կառուցվածքային-ինստիտուցիոնալ ուղղությունը ցույց է տալիս, որ սոցիալական մոբիլիզացումը ծագում է սոցիալական կարգի լարումների, ինստիտուցիոնալ ձախողումների և ռեսուրսների հասանելիության համատեղ ազդեցությամբ՝ կազմակերպչական ենթակառուցվածքների, արտաքին աջակցության և ցանցերի գործառնմամբ (Parsons, 1951; Coser, 1956; Park & Burgess, 1921/1984; Edwards & McCarthy, 2004; McAdam, Tarrow, & Tilly, 2001; Tarrow, 2011):

Տեսական գաղափարներում քննվում են քաղաքական հնարավորությունների այն փոփոխությունները, որոնք իջեցնում են սոցիալական մոբիլիզացումներում մասնակցության առջև դրվող նվազագույն պայմանները և բարձրացնում հաջողության հասնելու ակնկալիքը գործորդի (անգլ.՝ agent) դիտանկյունից, և որոնք ռեսուրսների մոբիլիզացման հաշվին կրճատում են կոլեկտիվ գործողությունից բխող ծախքերը և ընդլայնում մոբիլիզացման ներուժը (McCarthy & Zald, 1977; McAdam et al., 2001; Tarrow, 2011): Մշակութային-խորհրդանշական մոտեցումները, ի տարբերություն նախորդի, ընդգծում են սոցիալական մոբիլիզացման իմաստավորումը, դրա շուրջ կոլեկտիվ ինքնության ձևավորումը և կոլեկտիվ զգայական դինամիկան՝ որպես սոցիալական մոբիլիզացման շարժիչներ: Շրջանակավորման (անգլ.՝ framing) տեսությունը ցույց է տալիս, թե ինչպես են անարդարության և դրան առնչվող պատասխանատվության վեկտորների մասին պատումները լեգիտիմացնում խմբային գործողությունը (Snow & Benford, 1988; Benford & Snow, 2000): Զգացմունքների սոցիոլոգիայի գաղափարները մեկնաբանում են կոլեկտիվ վախի, վրդովմունքի, հպարտության և հույսի ներուժը՝ թելադրելու կոլեկտիվ գործողություններ (Goodwin, Jasper, & Polletta, 2001; Jasper, 2011): Դյուրկհեյմյան «կոլեկտիվ բորբոքման» (անգլ.՝ collective effervescence), վեբերյան սոցիալական գործողության և նոր սոցիալական շարժումների հայեցակարգերը, ինչպես նաև խմբային ինքնության, արժեքային կառուցվածքների ու կենսաշխարհ-համակարգ հարաբերությունների վերաբերյալ տեսական հայացքները մեկնաբանում են սոցիալական մոբիլիզացման մշակութային և ինքնության դիտանկյունները՝ անհատ-հասարակություն հարաբերությունների համատեքստում (Durkheim, 1912/1995; Weber, 1922/1978; Touraine, 1981; Habermas, 1987; Melucci, 1996, Tajfel & Turner, 1986; Polletta & Jasper, 2001):

Կոնֆլիկտային հասարակություններում սոցիալական մոբիլիզացումը կարելի է դիտել որպես «սոցիալական փաստ»՝ արտաքին, պարտադրող և լայնորեն տարածված նորմատիվ կառուցվածք, որի կրկնվող ալիքները պայմանավորված են ոչ միայն իրավիճակային շոկերով, այլև ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտի հիմքով ձևավորված սոցիալական միջավայրով (Durkheim, 1895/1982; Vigh, 2008; Crocker, Hampson, & Aall, 2005; Bar-Tal, 2013, Smith & Vaux, 2003; Cederman, Gleditsch, & Buhaug, 2013; Benford & Snow, 2000; Mannheim, 1928/1952, Wood, 2003; Aminzade & McAdam, 2001; Bourdieu, 1977; Swidler, 1986):

Վերջապես, սոցիալական անհավասարությունների ժամանակակից մոտեցումները՝ հորիզոնական անհավասարությունների և հարաբերական զրկման տեսությունները, կապում են կոնֆլիկտը և դրա համատեքստում հնարավոր կոլեկտիվ գործողությունները և սոցիալական մոբիլիզացումը միջխմբային բևեռացման, քաղաքական բացառման և կարգավիճակի համեմատական ընկալման ֆրուստրացիայի հետ (Stewart, 2008; Cederman, Wimmer, & Min, 2010; Cederman, Gleditsch, & Buhaug, 2013; Østby, 2008; Gurr, 1970; Davies, 1962): Կոնկրետ այս տեսական գաղափարների դաշտը, հետևաբար, զարգանում է դեպի կոմպոզիտ մոդելներ, որտեղ կառուցվածքային պայմանները, մշակութային իմաստները և գործորդության ռեժիմները կարող են փոխազդել՝ կառուցելով սոցիալական մոբիլիզացման ինքնավերարտադրող դինամիկա (McAdam et al., 2001; Tilly, 2004; Benford & Snow, 2000):

Սոցիալական մոբիլիզացումը կոնֆլիկտների համատեքստում դիտարկող տեսությունների գիտական մշակվածության քննումը ցույց է տալիս, որ համաշխարհային գրականության մեջ զարգացած են մոբիլիզացման թե՛ ռացիոնալիստական, թե՛ սիմվոլիկ-մշակութային մեկնաբանումները: Միևնույն ժամանակ, ձգձգված ու անհաղթահարելի կոնֆլիկտների համատեքստում ներքևից վերև ծագումով սոցիալական մոբիլիզացման միջէպիզոդիկ (դեպքից դեպք) և միջմակարդակ (միկրո–մեզո–մակրո) համադրված վերլուծություններ դեռևս չեն նույնականացվում:

Աշխատանքի էմպիրիկ համատեքստը՝ Ղարաբաղյան կոնֆլիկտը, արտացոլված և վերլուծված է բազմաթիվ գիտական-հետազոտական աշխատանքներում: Կոնֆլիկտի և դրա հասարակական ազդեցությունների վերաբերյալ վերջին տասնամյակների հասանելի հրապարակումներում կարելի է հանդիպել մի շարք արժեքավոր աշխատությունների, այդ թվում՝ տեսական վերլուծություններ (Арутюнян, 2007; Сагателян, 2012; Сагателян, 2015; Մկրտիչյան, 2018), պատմաքաղաքական և խորհրդային համատեքստի ուսումնասիրություններ (Cornell, 1999; Minasian, 2005; Баблоян, 2009; Аствацатуров & Баблоян, 2010; De Waal, 2013; Kohlhagen, 2013; Ayunts, 2014; Arzumanian, 2018; Perovic & Boskovska, 2018; Մկրտիչյան, 2019), աշխարհաքաղաքական մեկնաբանություններ (Uzer, 2012; Poghosyan, 2022), ինքնության, հիշողության, հանրային ընկալումների և կենսափորձի սոցիալ-հոգեբանական վերլուծություններ (Арутюнян, 2006; Huseynova, Hakobyan, & Rumyantsev, 2014; Trupia, 2017; Vartikyan, 2017; Ghahriyan & Atoyan, 2018; Shahnazaryan, Sukhashvili, & Banu, 2019; Smbatyan, Jumayeva, Hasanova, & Grigoryan, 2019; Atanesyan, 2024), ինչպես նաև Ղարաբաղյան շարժման պատմագիտական, քաղաքագիտական և մարդաբանական վերլուծություններ (Մարության, 2006; Шахназарян, 2011; Andreasyan & Derluguian, 2015; Մանասյան, 2015; Маркедонов, 2018; Суварян, 2022): Թեպետ Ղարաբաղյան կոնֆլիկտին վերաբերող հարուստ գիտական աշխատանքներում առկա են արժեքավոր պատմահասարակագիտական, էթնոքաղաքական և կոնֆլիկտաբանական ուսումնասիրություններ, ինչպես նաև քաղաքացիական մասնակցության ու կամավորության վերաբերյալ հետազոտություններ, դրանցում հարաբերականորեն անտեսված է սոցիալական մոբիլիզացման դեպքերի համեմատական դիտանկյունը 1988–2016–2020 դրվագների միջև, ինչպես նաև դրանց վերարտադրման համապարփակ տրամաբանության մեկնաբանումը՝ միկրո-մեզո-մակրո գործընթացային շղթայով:

Ատենախոսությունը փորձ է հագեցնելու գիտական գիտելիքի վերոնշյալ բացերը կամ սահմանափակումները՝ առաջարկելով բազմամակարդակ, մեխանիզմահեն (անգլ.՝ mechanism-based) հայեցակարգում, որտեղ հորիզոնական անհավասարությունները, մոբիլիզացման ֆրեյմավորումն ու կոլեկտիվ զգայական դրդապատճառները ինտեգրվում են մեկ տեսամեթոդաբանական սխեմայի մեջ: Արդյունքում ձևակերպվում է միջին մակարդակի տեսական մոդել, որը ներուժ ունի հարստացնելու գիտական դիտանկյունները այն հարցի շուրջ, թե ինչպես կարող է ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտը վերածվել հասարակության կառուցվածքային

միջավայրի, իսկ ներքևից վերև ծագած և ձևավորված սոցիալական մոբիլիզացումը՝ նորմատիվներով հագեցած սոցիալական կանոնի:

Օգտվելով վերը թվարկված տեսական մոտեցումներից, հայեցակարգերից ու մեկնաբանումներից՝ այս աշխատանքը դիտարկում է սոցիալական մոբիլիզացումը որպես բազմաչափ գործընթաց, որտեղ անհատական շարժառիթները, խմբային ինքնությունն ու կառուցվածքային պայմանները փոխազդում են՝ ձևակերպելով սոցիալական մոբիլիզացման գաղափարախոսական և մշակութային պրակտիկաները: Հատուկ կարևորություն է տրվում հիշողության և կոլեկտիվ վերապրումների դերին՝ որպես հանգամանքների, որոնք կոնֆլիկտային հասարակություններում հաճախ մեկնարկային ազդակ են հանդիսանում համախմբումների համար: Ուշադրություն է դարձվում նաև սոցիալական մոբիլիզացման իմաստավորման յուրահատկություններին, այն է՝ ինչպես են արժեքները, սիմվոլներն ու պատմական հիշողությունը կառուցակցում կոլեկտիվ գործողության նորմատիվ շերտը: Այսպես, ատենախոսությունը համադրում է սոցիալական մոբիլիզացումը բացատրող մշակութային և կառուցվածքային վեկտորները ու արձագանքում Ղարաբաղյան կոնֆլիկտի դեպքի սոցիոլոգիական ուսումնասիրությունների սահմանափակումներին՝ տեսամեթոդաբանական և հասկացութային չափումներում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտությունն իրականացվել է մեկնաբանողական սոցիոլոգիական հարացույցի շրջանակներում, որում առանցքային նպատակը ոչ թե պատճառահետևանքային կապերի դուրսբերումն է, այլ՝ սոցիալական փաստերի իմաստավորման գործընթացների պարզաբանումն ու մեկնաբանումը (Schutz, 1967; Berger & Luckmann, 1966; Lincoln & Guba, 1985): Սա համահունչ է ատենախոսության այն կանխադրույթին, ըստ որի՝ ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտի պայմաններում ներքևից վերև ծագող սոցիալական մոբիլիզացումը կարող է դառնալ նորմատիվ սոցիալական կանոն և փոխանցվել սերնդեսերունդ որպես կոլեկտիվ գործողության պատրաստի սցենար: Այս մոտեցման շրջանակներում համադրվել են դեպքի ուսումնասիրության (Geertz, 1973; Keutel & Werner, 2011; Yin, 2014; Stake, 2005) և պատմահամեմատական (Mahoney & Rueschemeyer, 2003; Skocpol, 1979; Tilly, 2004; McAdam, Tarrow, & Tilly, 2001) մեթոդաբանությունների գործիքակազմերը: Սա թույլ է տվել ապահովել ուսումնասիրության առանցքում ընկած տվյալների բազմակողմանիությունը՝ ներառելով և՛ պատմաժամանակագրական փաստագրումը, և՛ հանրային ճշմարտություններն ու սուբյեկտիվ իմաստավորումները, ինչպես նաև համակցելով հետազոտողի մասնագիտական հայացքն ու տեխնիկաները և ուսումնասիրվող համայնքների կենսափորձը:

Առաջնային տվյալների հավաքագրման համար կիրառվել են խորին հարցազրույցի (Թադևոսյան, 2006) և նարատիվ հարցազրույցի (տե՛ս նույն տեղում) մեթոդները Ղարաբաղյան պատերազմի կամավորների և Ղարաբաղյան շարժման մասնակիցների հետ՝ ապահովելով տեղեկատվության խորքայնությունն ու անհատական կենսափորձը, ինչպես նաև սյուժեների և ժամանակային հաջորդականությունների վերակառուցումը: Ընդհանուր առմամբ իրականացվել է 19

խորին հարցազրույց և 11 նարատիվ հարցազրույց՝ նպատակաուղղված ընտրանքով՝ ընդգրկելով տարբեր ենթախմբեր՝ ըստ տարիքային միջակայքերի և նախկին փորձառությունների: Երկրորդային տվյալները հավաքագրվել են փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդով՝ ներառելով պատմագրական գրառումներ, հասարակագիտական ուսումնասիրություններ, զեկույցներ, մենագրություններ, հոդվածներ, արխիվային նյութեր, հաղորդումներ, հարցազրույցներ և բաց տվյալադարաններ: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվել է թվով 120 երկրորդային աղբյուր: Ելնելով հետազոտության նպատակից և ընտրված պատմահամեմատական և դեպքի ուսումնասիրության մեթոդաբանություններից՝ առաջնային և երկրորդային տվյալները վերլուծվել են մեկնաբանողական թեմատիկ վերլուծության (Peterson, 2017) և գործընթացների հետքավորման (անգլ.՝ process tracing) (George & Bennett, 2005; Collier, 2011) ռազմավարությունների շրջանակներում: Աշխատանքի մեթոդաբանությունը մանրամասնորեն ներկայացված է ատենախոսության 1.4 ենթագլխում:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը սոցիոլոգիական առումով նշանակալի մի քանի գիտական նորույթներ է պարունակում: Մասնավորապես.

1. Մշակվել է ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների համատեքստում սոցիալական մոբիլիզացումն ըմբռնելու և մեկնաբանելու եռաստիճան հասկացութային հայեցակարգ՝ միավորելով միկրո-մեզո-մակրո չափումներում դիտարկելի խմբային և կառուցվածքային գործոնները:
2. Միջէթնիկ հարաբերությունների տեսանկյունից վերլուծական առումով կամրջվել են օբյեկտիվ հորիզոնական անհավասարությունների և վերջիններիս վերաբերյալ սուբյեկտիվ ընկալումների վերաբերյալ էմպիրիկ տվյալները, և տեսությունների դեդուկտիվ ստուգման ճանապարհով վավերացվել է հորիզոնական անհավասարությունները տեսաբանող հասարակագիտական հայեցակարգում առաջարկվող (Cederman, Gleditsch, & Buhaug, 2013)՝ անհավասարությունից մինչև մոբիլիզացում գործընթացային շղթայի բացատրական ներուժը Ղարաբաղյան շարժման դեպքի նկատմամբ՝ գործընթացների հետքավորման վերլուծական մոտեցման միջոցով:
3. Ղարաբաղյան կոնֆլիկտի 2016 և 2020 թթ. էսկալացիաների հիմքով ձևավորված կամավորական շարժումների մասնակիցների պատումների վերլուծության շնորհիվ տիպաբանվել և մեկնաբանվել են սոցիալական մոբիլիզացման գործընթացին քաղաքացիական մասնակցության արժեքային և ռացիոնալ շարժառիթները, և տեսության դեդուկտիվ ստուգման ճանապարհով վավերացվել են կոլեկտիվ գործողության դրդապատճառները տեսաբանող հասարակագիտական հայեցակարգում (Wood, 2003) առաջարկվող դրույթները:

Տեսական և էմպիրիկ վերլուծությունների շնորհիվ դիտարկելով ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտներ վերապրող հասարակությունների յուրահատկությունները՝ առաջադրվել է օնտոլոգիական կանխադրույթ, ըստ որի՝ նմանօրինակ կոնֆլիկտների պարագայում «սոցիալական իրականություն-կոնֆլիկտ» հասկացութային փոխառնչության համակարգում իմաստ ունի կոնֆլիկտը մեկնաբանել որպես սոցիալական իրականության կառուցվածքային համատեքստ, և ոչ՝

իրականությունը մեկնաբանել որպես կոնֆլիկտի կառուցվածքային համատեքստ: Այլ կերպ ասած՝ հասարակությունները, որոնք երկարատև և բռնի կոնֆլիկտների անմիջական ազդակիր են, հակված են կոնֆլիկտն ընկալելու որպես նորմալություն (և ոչ՝ դրանից շեղում) և հետևաբար՝ կառուցելու իրենց տարածաժամանակային պրակտիկաները այդ իսկ նորմալության շրջանակներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության հիմնական դրույթները հետևյալն են.

1. Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում սոցիալական մոբիլիզացման ծագումնաբանությունը և վերարտադրման դրսևորումները հայեցակարգելու համար նպատակահարմար է կառուցել բազմամակարդակ հասկացութային սխեմա՝ միաժամանակ ինտեգրելով մոբիլիզացման անհատական, խմբային և կառուցվածքային չափումները:
2. Ղարաբաղյան շարժման ձևավորման հիմքում ընկած է գործընթացային շղթա, որտեղ ենթադրյալ փոխառնչություն կա միջէթնիկ հորիզոնական անհավասարությունների և սոցիալական մոբիլիզացման միջև, որտեղ շղթայի քայլերն ունեն հետևյալ տրամաբանությունը՝ (1) հորիզոնական անհավասարություն (անկախ փոփոխական), (2) հարաբերական զրկանք, (3) կոլեկտիվ դժգոհություն, (4) միացում մոբիլիզացմանը, (5) սոցիալական մոբիլիզացման կայացում:
3. Ղարաբաղյան կոնֆլիկտի 2016 և 2020 թթ. պատերազմական գործողություններին մասնակցած կամավորական շարժումներում քաղաքացիական անձանց կամավոր մասնակցության որոշման հիմքում կենտրոնական նշանակություն ունեն կոլեկտիվ զգայական դրդապատճառները, որոնք հաճախ առավել զգալի դեր են խաղում, քան նյութական կամ ռացիոնալ դրդապատճառները:
4. Ղարաբաղյան կոնֆլիկտի տարբեր փուլերում դիտարկվող սոցիալական մոբիլիզացման դրվագները ինքնավերարտադրությունն են ի սկբանե անկախության համար և անհավասարությունների դեմ ձևավորված շարժման, որի կողմից թիրախավորվող խնդիրների լուծման բացակայության դեպքում տարածքային մեկուսացումը, անվտանգության երկընտրանքները և միջէթնիկական անվստահությունը շարունակում են փոխանցել մոբիլիզացման գիտելիքը սերնդեսերունդ և վերարտադրել կոնֆլիկտային գործողությունները:

Ատենախոսական հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները ներուժ ունեն խորացնելու ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների համատեքստում սոցիալական մոբիլիզացման վերաբերյալ գիտական գիտելիքը կոնֆլիկտի սոցիոլոգիայում: Մասնավորապես, աշխատանքը.

- առաջարկում է հայեցակարգում, որը միավորում է անհատական դրդապատճառները (ռացիոնալ–արժեհամակարգային), խմբային ինքնությունն ու զգայական դինամիկան և կառուցվածքային անհավասարությունները՝ ներկայացնելով դրանց փոխազդեցության կոնկրետ շղթա և թույլ տալով հստակեցնել, թե ինչ պայմաններում է ներքևից վերև սոցիալական մոբիլիզացումը նորմատիվացվում որպես սոցիալական կանոն.

- ամրապնդում է կոնֆլիկտը որպես կառուցվածքային միջավայր դիտարկող պնդումը, ըստ որի՝ ձգձգված կոնֆլիկտները դառնում են հասարակական կյանքը կարգավորող համատեքստ, որտեղ մոբիլիզացման սցենարները փոխանցվում են սերնդեսերունդ՝ հիշողության ինստիտուցիոնալ և ոչ ֆորմալ ուղիներով.
- կամրջում է օբյեկտիվ անհավասարությունների և դրանց սուբյեկտիվ ընկալումների շղթան՝ մեկնաբանելով, թե դրանք ինչպես կարող են խորացնել կամ մեղմել մոբիլիզացման ինտենսիվությունը կոնֆլիկտի տարբեր դրվագներում.
- առաջարկում է կոնֆլիկտների համատեքստում մոբիլիզացման սոցիալական դրսևորումների նկարագրություն.
- որոշարկում է միկրո–մեզո–մակրո մակարդակների գործոնների շղթա՝ թույլ տալով հետագա հետազոտական նախաձեռնություններում փորձարկել նույն շրջանակը այլ դեպքերի վրա՝ համատեքստային հարմարեցումների պարագայում:

Ատենախոսության արդյունքները կիրառելի են նաև քաղաքականության ձևավորման, խաղաղաշինության և համայնքային զարգացման ոլորտներում: Մասնավորապես, մոբիլիզացման սոցիալական դրսևորումների մեկնաբանումը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե հասարակական որ ենթահամակարգերում (ընտանիք, համայնք, ցանցեր, թվային հարթակներ) է ձևավորվում և պահպանվում սոցիալական համախմբումը, և որտեղ կարող է մեղմող կամ հզորացնող քաղաքականությունների կամ խաղաղաշինական միջամտությունների կարիք լինել: Բացի այդ, կոնֆլիկտների համատեքստում տեղի ունեցող սոցիալական մոբիլիազումը սոցիալական արդարության պրիզմայով քննելը թույլ է տալիս առավել հանգամանալից պատկերացում կազմել խաղաղությանն ուղղված քաղաքական գործընթացների արդյունավետության մասին՝ հուշելով, որ հիշողության և մոբիլիզացման սցենարների իներցիայի շնորհիվ պահպանում են ներքևից վերև քաղաքացիական նախաձեռնությունների պոտենցիալը, թե երբ և ինչպես կարող է «խաղաղության» այս կամ այն գործընթացին ի արձագանք սոցիալական մոբիլիզացման նոր ալիք բարձրանալ:

Հետազոտական արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի տեսության և պատմության ամբիոնում: Ատենախոսության հիմնադրույթները տեղ են գտել թեմատիկ գիտաժողովներում և գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, տասը ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատեխոսության ընդհանուր ծավալը 132 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը և գիտական գիտելիքի բացը, որն ատենախոսությունը միտված է լրացնել: Ներածությունում նաև ներկայացվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, քննվել են թեմայի տեսական հիմքերն ու գիտական մշակվածության աստիճանը, ներկայացվել են ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Ձևակերպվել է հետազոտության գիտական նորույթը և տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև քննվել է ուսումնասիրության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «Հասկացութային և տեսամեթոդաբանական հիմքեր», բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլուխը նվիրված է սոցիալական մոբիլիզացման սոցիոլոգիական ըմբռնման քննարկմանը: Սոցիալական մոբիլիզացումը[2] սոցիոլոգիայում առանցքային հասկացություն է, որը բնութագրում է բազմաշերտ գործընթաց, որի ընթացքում անհատներն ու խմբերը համախմբվում են՝ լուծելու սոցիալական, քաղաքական կամ տնտեսական խնդիրներ և խթանելու որևէ սոցիալական փոփոխություն՝ ըստ իրենց ընդհանուր շահերի: Ենթագլխում մանրամասնորեն քննարկվում է, թե սոցիոլոգիական տեսաբանման շրջանակներում ինչպես է սահմանվում և տիպաբանվում մոբիլիզացումը որպես սոցիալական երևույթ, ինչպես նաև որոշարկվում՝ սոցիալական մոբիլիզացման ինչ օպերացիոնալ սահմանման հենքի վրա է կառուցվում սույն հետազոտական աշխատանքը: Սինթեզելով ակադեմիական գրականությունում հանդիպող սոցիալական մոբիլիզացման հասկացության մեկնաբանությունները՝ սույն հետազոտության շրջանակներում հասկացությունը սահմանվում է որպես գործընթաց, որի ժամանակ հասարակության անդամները կամ խմբերը ինքնաբուխ կերպով ներգրավվում են այնպիսի սոցիալական գործողություններում, որոնք (1) պարունակում են բարձր ռիսկայնություն, (2) ուղղված են որոշակի կոլեկտիվ նպատակի հասնելուն և (3) կարող են դրսևորվել որպես սոցիալական շարժում: Այն կարող է ներառել կոլեկտիվ գործողությունների ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական ձևեր՝ շեշտը դնելով ներքևից վերև, կամավոր ներգրավվածության և սոցիալական շարժման նախատիպ ձևավորելու վրա, և ընդհանուր առմամբ չի ներառում զուտ վերևից ներքև կամ պետության կողմից պարտադրված մոբիլիզացումը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում քննարկվում է անհաղթահարելի կոնֆլիկտների պայմաններում սոցիալական մոբիլիզացումը որպես սոցիալական փաստ: Որոշ կոնֆլիկտային հասարակություններ «պատերազմ-խաղաղություն» երկբևեռ տրամաբանությունից դուրս են (Mkrtichyan, 2021; Mkrtichyan, 2012; Dijkzeul, 2008; Арутюнян, 2007) և տարիների, իսկ հաճախ՝ տասնամյակների ընթացքում չեն լուծվում, թեպետ բռնության ինտենսիվությունը կարող է տատանվել (Klosek, et al., 2021;

[2] **Նշում**. այս աշխատանքի շրջանակներում հեղինակի կողմից ներկայացվող դրույթներում հանդիպող «մոբիլիզացում» և «սոցիալական մոբիլիզացում» եզրույթները նույնական են և պետք է ընկալվեն ու մեկնաբանվեն միևնույն սահմանման շրջանակներում:

Cuppuleri, 2020; Pohl, 2016): Մ. Ազարը դրանք անվանում է «ձգձգվող սոցիալական կոնֆլիկտներ» (Azar, 1990)՝ շեշտելով, որ կողմերի՝ իրար ուղղությամբ ներկայացվող պահանջները խարսխված են ինքնության, անվտանգության և ճանաչման խորքային կարիքների վրա: Այս կոնֆլիկտների միջև ընդհանրությունները նրանում են, որ դրանք են՝ (1) երկարատևությունը (հաճախ՝ 25 և ավելի տարի), (2) տարածքային կամ ինքնության անհամատեղելի պահանջները, (3) պարբերաբար կրկնվող, բայց ոչ ամբողջածավալ պատերազմական բռնկումները, (4) միջազգային միջնորդության հաճախակի, սակայն ոչ վճռորոշ ներգրավվածությունը և (5) հասարակության տարբեր ենթահամակարգերի՝ կրթության, մեդիայի, մշակույթի, տնտեսական քաղաքականության ներհյուսվածությունը կոնֆլիկտային օրակարգում (Kriesberg, 1993): Է. Դյուրկհեյմը սոցիալական փաստը նկարագրում է որպես (ա) անհատներից անկախ, (բ) ստիպողական, (գ) լայնորեն տարածված և (դ) արտաքին կարգավորման ենթակա երևույթ (Durkheim, 1895/1982): Դյուրկհեյմյան տրամաբանությամբ՝ սոցիալական մոբիլիզացումը անհաղթահարելի կոնֆլիկտի համատեքստում սոցիալական փաստ է հիշեցնում, քանի որ իքնությունը, սիմվոլները և նույնիսկ՝ մոբիլիզացման տերմինաբանությունը գոյություն ունեն անհատներից դուրս և նախքան նոր սերունդը կունենա քաղաքական գիտակցություն: Այս տեսանկյունից՝ աշխատանքի շրջանակներում սահմանված սոցիալական մոբիլիզացումը դիտարկվում է ոչ թե որպես պարզապես սոցիալական կոլեկտիվ գործողություն, այլ, ըստ էության՝ սոցիալական փաստ:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում քննարկվում են սոցիալական անհավասարությունները՝ որպես կոնֆլիկտի ծագման հիմքում գտնվող առանցքային գործոններ: Այստեղ անդրադարձ է կատարվում սոցիոլոգիական գիտելիքի ձևավորման ակունքներից ի վեր սոցիալական անհավասարությունների դասական մեկնաբանումներին, ինչպիսիք են Կ. Մարքսի՝ արտադրական ուժերի ու դասային բևեռացումների քննումը հեղափոխության (Marx, 1867/1990) համատեքստում, Մ. Վեբերի՝ սոցիալական շերտավորման քննումը՝ ստատուսի և իշխանության համադրմամբ ստեղծված հանգամանքների համատեքստում (Weber, 1922/1978), Է. Դյուրկհեյմի «օրգանական համերաշխության» գաղափարը (Durkheim, 1995), ինչպես նաև Գ. Զիմելի բևեռացված փոխգործակցությունների քննարկումը (Simmel, 1955/1908): Այս դասական տեսաբանումները գլխավորապես նկարագրում են ուղղահայաց անհավասարությունը՝ անհատների և դասակարգերի բաշխվածությունը ռեսուրսների հիերարխիկ շերտերով, մինչդեռ անհավասարության ժամանակակից տեսաբանման կարևոր տեղաշարժը ապահոված՝ Ֆ. Սթյուարթի և Լ. Սեդերմանի դպրոցները ցույց են տալիս, որ խմբերի միջև առկա հորիզոնական անհավասարությունները ոչ պակաս վճռորոշ են, երբ կոնֆլիկտն անցնում է միջէթնիկ կամ տարածաշրջանային մակարդակի (Stewart, 2008; Cederman, Gleditsch, & Buhaug, 2013): Հորիզոնական անհավասարություններն ընդգրկում են տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային չափումներ՝ տարածված կամ, ընդհակառակը, կենտրոնացված խմբերի միջև (Østby, 2008): Ենթագլուխը հանգամանալից անդրադառնում է Լ. Սեդերմանի տեսության ինտեգրատիվ հայացքին, որտեղ նյութական և արժեհամակարգային բևեռացումը փոխգործում են ինստիտուցիոնալ բացառման հետ՝ ստեղծելով

ապստամբության համար նպաստավոր կառուցվածքային հանգույց՝ փաստարկելով, որ անհավասարությունները՝ հատկապես հորիզոնական՝ միջխմբային տիրույթներում, ոչ միայն սերմանում են կոնֆլիկտը, այլև ստեղծում են սոցիալ-հոգեբանական ու կառուցվածքային միջավայր, որտեղ սոցիալական մոբիլիզացումը ծագում և հետագայում ինստիտուցիոնալացվում է՝ ուղեկցվելով այլ հանգամանքներով:

Առաջին գլխի չորրորդ ենթագլուխը նվիրված է հետազոտության մեթոդաբանական ռազմավարությունը մանրամասնությամբ ներկայացնելուն՝ մասնավորապես անդրադառնալով աշխատանքի իմացաբանական հիմքերին, մեթոդաբանական մոտեցմանը, տվյալների հավաքագրման մեթոդներին, տվյալների աղբյուրներին, ընտրանքային ռազմավարություններին և վերլուծական մեթոդաբանությանը: Հետազոտությունն իրականացվել է մեկնաբանողական սոցիոլոգիական հարացույցի շրջանակներում՝ համադրելով դեպքի ուսումնասիրության (Geertz, 1973; Keutel & Werner, 2011; Yin, 2014; Stake, 2005) և պատմահամեմատական (Mahoney & Rueschemeyer, 2003; Skocpol, 1979; Tilly, 2004; McAdam, Tarrow, & Tilly, 2001) մեթոդաբանությունների գործիքակազմերը: Առաջնային տվյալների հավաքագրման համար կիրառվել են խորին հարցազրույցի (Թադևոսյան, 2006) և նարատիվ հարցազրույցի (տե՛ս նույն տեղում) մեթոդները Ղարաբաղյան պատերազմի կամավորների և Ղարաբաղյան շարժման մասնակիցների հետ. ընդհանուր առմամբ իրականացվել է 19 խորին հարցազրույց և 11 նարատիվ հարցազրույց: Երկրորդային տվյալները հավաքագրվել են 120 երկրորդային աղբյուր փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդով՝ ներառելով պատմագրական գրառումներ, հասարակագիտական ուսումնասիրություններ, զեկույցներ, մենագրություններ, հոդվածներ, արխիվային նյութեր, հաղորդումներ, հարցազրույցներ և բաց տվյալադարաններ: Տվյալները վերլուծվել են մեկնաբանողական թեմատիկ վերլուծության (Peterson, 2017) և գործընթացների հետքավորման (անգլ.՝ process tracing) (George & Bennett, 2005; Collier, 2011) ռազմավարությունների շրջանակներում:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Սոցիալական մոբիլիզացման պատմական և կառուցվածքային նկարագիրը», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլուխը նվիրված է Ղարաբաղյան շարժման՝ որպես սոցիալական մոբիլիզացման արմատներում անհավասարությունների վերլուծությանը: Մասնավորապես քննարկվում և գծապատկերների միջոցով վիզուալացվում է 1991 թ. առաջին Ղարաբաղյան պատերազմի մեկնարկին նախորդած հիմնական իրադարձությունների ժամանակագրությունը[3]՝ հենվելով Թ. Դե Վաալի (2013), Ժ. Լիբարիդյանի (1988), Հ. Չիլինգիրիանի (1999), Ա. Յամսկովի (1991) և Ա. Մանասյանի (2005) աշխատությունների համատեղ ուսումնասիրության վրա: Ցույց են տրվում

[3] **Վերապահում.** ուսումնասիրությունն անդրադառնում է Ղարաբաղյան շարժմանը՝ սոցիալական մոբիլիզացում, որը ծագել է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հայ բնակչության շրջանում և շրջանակվել ու քաղաքականացվել է հատկապես հայկական նարատիվներում: Ուստի, հայկական տեսանկյան ուսումնասիրությունը ի բնե թելադրված է ուսումնասիրության շրջանակով: Միայն սրանով, և ոչ՝ որևէ կողմնակալությամբ պայմանավորված է, որ ուսումնասիրությունը հաշվի չի առնում ադրբեջանական աղբյուրների մեկնաբանումները: Վերջինս դուրս է գալիս այս ուսումնասիրության շրջանակներից և, ավելի շուտ, պատկանում է Ղարաբաղյան կոնֆլիկտի վերաբերյալ ավելի լայն գիտական աշխատանքին:

Ղարաբաղյան շարժմանը նախորդած ժամանակաշրջանում (1920-1988 թթ.) էթնիկ պատկանելության հիմքով դրսևորված հորիզոնական անհավասարության ձևերը՝ մշակութային-սիմվոլիկ, տնտեսական, քաղաքական և սոցիալական չափումներում: Բացահայտվում է հորիզոնական անհավասարությունների հիմքում ընկած էթնիկության և հարաբերական զրկանքի գործոնները: Քննվող բոլոր թեզերը փոխկապակցվում են սոցիալական մոբիլիզացման հետ, որովհետև հենց սոցիալ-տնտեսական անհավասարությունների, գոյաբանական վտանգների և անարդարության սուր զգացողության համադրությունն է դիտարկվում կոլեկտիվ գործողության առանցքային շարժառիթը:

Երկրորդ ենթագլուխը խորությամբ ուսումնասիրում է Ղարաբաղյան շարժման բուն ժամանակաշրջանը (1988-1991 թթ.)՝ անդրադառնալով շարժման առաջացման համատեքստում հավաքական բողոքից դեպի մոբիլիզացում շղթայական գործընթացի յուրահատկություններին: Երևակվում է, որ դժգոհությունների վեկտորը կրող իշխանության կողմից կոլեկտիվ բողոքներին ի պատասխան ձեռնարկված գործողություններն են, որ որոշիչ են գործընթացի հետագա զարգացման համար: Գծապատկերների միջոցով ցույց է տրվում և մեկնաբանվում է այն հարցի պատասխանը, թե, եթե ԼՂ-ում հորիզոնական անհավասարություններ են նկատվել 1920-ական թվականներից ի վեր, ինչու՞ է, որ սոցիալական մոբիլիզացում տեղի չի ունեցել մինչև 1988 թվականը, այլ՝ միայն 1988 թվականից ի վեր: Ներկայացվող վերլուծությունը մոտավոր ճանապարհային քարտեզ է առաջարկում հորիզոնական անհավասարություններից մինչև զանգվածային մոբիլիզացում՝ պատկերելով, թե ինչպես են փորձառությունները և գործընթացները ձևավորվում միմյանց վրա կուտակվելով՝ ի վերջո հանգեցնելով զանգվածային մոբիլիզացման: Բացահայտվում է երկու հիմնական գործոն, որոնք էմպիրիկ վերլուծության արդյունքում հայտնի են դարձել որպես առանցքային միջավայրային պայմաններ, մասնավորապես՝ պետական բռնաճնշումները և Մ. Գորբաչովի առաջնորդության օրոք «գլասնոստի» և վերակառուցման սկզբունքների ներդնումը:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Գործորդությունը և հավաքական գործողությունը սոցիալական մոբիլիզացման համատեքստում», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում քննվում են պատերազմի կամավորների շրջանում անհատական շարժառիթներն ու խմբային ինքնությունը՝ կամավորականության համատեքստում: Վերջինս, դրսևորվելով ճգնաժամի կամ կոնֆլիկտի համատեքստում, դառնում է դիմադրողականության, սոցիալական մոբիլիզացման և փոխակերպման միջոց, քանի որ համայնքները կազմակերպվում են ֆորմալ ինստիտուտներից այն կողմ (Fischer & Schaffer, 1993), իսկ սոցիալական մոբիլիզացման համատեքստում ամրապնդում է շարժման կազմակերպումը՝ նվազեցնելով կոլեկտիվ գործողությունների ծախսերը և ընդլայնելով քաղաքացիական մասնակցության հնարավորությունները (Klandermans, 1997): 2016 և 2020 թթ. պատերազմի կամավորների հետ հետազոտությունները ցույց են տալիս, որ հուզական և բարոյական դրդապատճառները մեծ դեր են խաղում կամավորագրվելու որոշման ձևավորման գործում:

Գծապատկերների և աղյուսակների միջոցով նախ ցույց է տրվում, որ վերոհիշյալ խթանները համապատասխանում են Է. Վուդի կողմից (2003) առաջարկվող կատեգորիզացմանը, այն է՝ մասնակցություն, անհնազանդություն, գործորդության գրավչություն: Այնուհետև, կամավորների մոտիվացիաները քննարկվում են Մ. Վեբերի (1978) սոցիալական գործողության տեսության[4] տեսանկյունից, որն առաջարկում է սոցիալական գործողությունների չորս տեսակ՝ ներառյալ նպատակառացիոնալ գործողությունը, արժեքային կողմնորոշված գործողությունը[5], ավանդական գործողությունը[6] և աֆեկտիվ գործողությունը[7]: Ըստ այդմ՝ վերջին երեքը, տարբեր համադրություններով, համապատասխանում են կամավորության շարժառիթների քննարկվող կատեգորիաներին՝ մասնակցությունը՝ աֆեկտիվ և ավանդական, անհնազանդությունը՝ ավանդական և արժեքառացիոնալ, և գործորդության գրավչությունը՝ արժեքառացիոնալ և աֆեկտիվ:

Երկրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում պատերազմի կամավորների ընկալումներին իրենց սեփական ինքնության վերաբերյալ կամավորականության համատեքստում: Հստակ ուրվագծվում են ինքնության ընկալվող տարբերությունները կամավորի և զինվորի միջև, մասնավորապես՝ զինվորների համար անհատական դրդապատճառների ներքո ընկած արժեքները, իմաստները, դերերը և գործողությունները չեն համատեքստավորում կոնֆլիկտը, այլ ավելի շուտ դրսևորվում են կոնֆլիկտի համատեքստում: Ենթագլխում քննարկվում է, թե ինչպես է պատերազմի ընթացքում առաջանում սոցիալական իրականության յուրահատուկ մոդել, որտեղ ներկան գերիշխում է ապագայի նկատմամբ, իսկ ժամանակի զգացողությունը գործում է ոչ թե մոնոքրոն, այլ պոլիքրոն ընկալմամբ՝ պայմանավորված գոյաբանական հրատապությամբ: Այսպիսով, պատերազմի ենթադրվող և իրական սպառնալիքների, ինչպես նաև ապագայի անորոշության պայմաններում, ապագայի պլանավորումը ձևավորվում է ոչ թե ռացիոնալ կանխատեսման, այլ գոյաբանական հրատապության հիման վրա՝ ամրապնդելով ներկայի գերիշխանությունը ապագայի հանդեպ: Կամավորների աշխարհի տեսլականը ներկայացնում է ոչ միայն առանձին անհատների պատերազմական փորձառությունը, այլ նաև արտացոլում է ավելի լայն սոցիալական պայմաններ, որոնք ձևավորում են պատերազմից հետո գոյություն ունեցող հասարակության որակը:

Չորրորդ գլուխը, որը վերնագրված է «Հայեցակարգելով սոցիալական մոբիլիզացումը խմբային և կառուցվածքային դիտանկյուններից», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում քննարկվում է սոցիալական մոբիլիզացումը անհատական, խմբային և համակարգային չափումներում: Կատարված հետազոտությունների և ավելի լայն սոցիոլոգիական գրականության վերլուծությունները

---

[4] Նպատակին հասնելու ամենաարդյունավետ միջոցների ռացիոնալ հաշվարկների վրա հիմնված բարձր նպատակաուղղված գործողություն:

[5] Գործողություն, որն ուղղված է համեմատաբար սոցիալ-մշակութային կարևորություն ունեցող արժեքի իրականացմանը:

[6] Կրկնվող գործողություն, որը առաջնորդվում է ավանդույթով, սովորույթով կամ սովորույթով:

[7] Գործողություն, որը հիմնված է միայն զգացմունքների վրա:

համադրելով՝ առաջարկվում է բազմամակարդակ գործընթացային շղթայական մոդել՝ բացատրելու համար, թե ինչպես են կառուցվածքային անհավասարությունները, խմբային դինամիկան և անհատական մոտիվացիաները փոխազդում ձգձգված կոնֆլիկտներում մոբիլիզացում առաջացնելու համար: Միկրո մակարդակում սոցիալական մոբիլիզացումը սնվում է անհատների հույզերով, բարոյական համոզմունքներով և ապրած փորձով: Մեզո մակարդակում կոնֆլիկտի համատեքստում առաջացած մոբիլիզացումը կատալիզացվում է համախմբված «մենք» խմբի ի հայտ գալով: Մոբիլիզացման հուզական և խմբային շարժիչ ուժերի ետևում մակրոկառուցվածքային պայմաններն են քննվում, որոնք հասարակությունը հակված են դարձնում կոլեկտիվ գործողությունների՝ ներառելով թաքնված անհավասարություններ և կատալիտիկ իրադարձություններ կամ տեղաշարժեր: Ի վերջո, մակրոպայմանները հնարավորություն են ստեղծում կոնֆլիկտի համատեքստում սոցիալական մոբիլիզացման վերարտադրման համար: Ձգձգված կոնֆլիկտները ստեղծում են կախվածություններ և ինստիտուցիոնալացված սցենարներ, որոնք շարունակում են իմաստավորել և անհրաժեշտ դարձնել սոցիալական մոբիլիզացումը:

Երկրորդ ենթագլխում ներկայացված բովանդակությունը կամրջում է սոցիալական մոբիլիզացման խմբային և կառուցվածքային գործոնները՝ առաջարկելով համադրված բազմամակարդակ հայեցակարգային շրջանակ՝ Ղարաբաղյան կոնֆլիկտի հանգեցրած մոբիլիզացումը բացատրելու փորձ կատարելու համար: Այս շրջանակը ենթադրում է, որ կոլեկտիվ գործողությունը մեկուսացված գործոնների արդյունք չէ, այլ փոխկախված գործընթացի արդյունք, որն ընդգրկում է երեք վերլուծական մակարդակ՝ անհատական կենսափորձի (միկրո), կոլեկտիվ և ինքնության վրա հիմնված (մեզո) և կառուցվածքային և պատմական (մակրո): Քննարկված միկրո, մեզո և մակրո չափումները միավորելով՝ ձևակերպվում է կոնֆլիկտի համատեքստում առաջացող սոցիալական մոբիլիզացման քայլ առ քայլ շղթան: Գծապատկերների միջոցով բովանդակվում և նկարագրվում է այդ շղթայական գործընթացը որպես հաջորդականություն, որը կապում է կառուցվածքային պայմանները խմբային դինամիկայի և անհատական գործողությունների հետ, որը գագաթնակետին է հասնում սոցիալական մոբիլիզացմամբ: Մակրոկառուցվածքային անհավասարությունները և պատմական դժգոհությունները խմբային մակարդակում ստեղծում են կոլեկտիվ դժգոհություններ, որոնք, իրենց հերթին, անհատների համար առաջացնում են բարոյական և հուզական մոտիվացիաներ մասնակցելու համար: Այս գործընթացը, ի վերջո, հանգեցնում է սոցիալական մոբիլիզացման, հատկապես, երբ դա ուղեկցվում է քաղաքական հնարավորություններով կամ սուր սպառնալիքներով: Այսով ընդգծվում է, որ ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտի համատեքստում առաջացած սոցիալական մոբիլիզացումը զարգացող գործընթաց է, այլ ոչ թե եզակի իրադարձություն:

Ատենախոսության եզրակացությունում կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում ծագած սոցիալական մոբիլիզացման դեպքերը՝ 1988 թ. Ղարաբաղյան շարժումը, 2016 թ. «Քառօրյա» պատերազմի կամավորական շարժումը և 2020 թ. 2-րդ Ղարաբաղյան պատերազմի

կամավորական շարժումը, թեպետ հարաբերականորեն սակավ ուսումնասիրված են, սակայնև՝ կոնֆլիկտի ժամանակագրությունում սոցիոլոգիապես խիստ արժեքավոր տեղեկատվություն են պարունակում: Դրանց ծագումնաբանությունն ու զարգացման գործընթացն ըմբռնելը ոչ միայն հայաստանյան հասարակությունում սոցիալական մոբիլիզացման գործընթացների մասին են պատկերացում տալիս, այլև՝ որոշարկում են բուն էթնոքաղաքական կոնֆլիկտի սոցիալական «դեմքը», ինչպես նաև հուշում հայ հասարակության յուրահատկությունների մասին ուսումնասիրված ժամանակահատվածում: Մասնավորապես՝ սոցիալական մոբիլիզացման ուսումնասիրված դեպքերի համեմատական սինթեզը թույլ է տալիս առաջադրել օնտոլոգիական կանխադրույթ, ըստ որի՝ ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների պարագայում «սոցիալական իրականություն-կոնֆլիկտ» հասկացութային փոխառնչության համակարգում առավել իմաստալի կարող է լինել ոչ թե սոցիալական իրականությունը մեկնաբանել որպես կոնֆլիկտի կառուցվածքային համատեքստ, այլ հակառակը՝ կոնֆլիկտը որպես սոցիալական իրականության համատեքստ: Այս եզրահանգման հիմնական դրույթն այն է, որ հասարակությունները, որոնք երկարատև, բռնի, բարդ հաղթահարելի կոնֆլիկտների անմիջական ազդակիր են, երկարաժամկետ կտրվածքով հակված են կոնֆլիկտն ընկալելու որպես նորմալություն և իրենց տարածաժամանակային պրակտիկաները կառուցելու այդ իսկ նորմալության շրջանակներում:

2. Ղարաբաղյան շարժման ձևավորման հիմքում ընկած է գործընթացային շղթա, որտեղ կարելի է նկատել միջէթնիկ հորիզոնական անհավասարությունների և սոցիալական մոբիլիզացման միջև որոշակի կապ: Այս գործոնների փոխառնչակցությունը դիտարկվում է հորիզոնական անհավասարություններից դեպի հարաբերական զրկումը, հարաբերական զրկումից դեպի կոլեկտիվ դժգոհությունը, կոլեկտիվ դժգոհությունից դեպի միացումը մոբիլիզացմանը և մոբիլիզացմանը միանալուց դեպի սոցիալական մոբիլիզացման կայացումը ներառող շղթայի շրջանակներում: Ընդ որում՝ այս պարագայում, երբ էթնոքաղաքական կոնֆլիկտում միջէթնիկ հորիզոնական հարաբերությունների վերլուծությունը կամրջվում է օբյեկտիվ հորիզոնական անհավասարությունների և վերջիններիս վերաբերյալ սուբյեկտիվ ընկալումների վերաբերյալ էմպիրիկ տվյալների հետ, կարելի է տեսությունների դեդուկտիվ ստուգման ճանապարհով վավերացնել Լ. Սեդերմանի և համահեղինակների՝ հորիզոնական անհավասարությունները տեսաբանող հասարակագիտական հայեցակարգի բացատրական ներուժը նաև էթնոքաղաքական և միջպետական կոնֆլիկտի օրինակի վրա:

3. Ղարաբաղյան կոնֆլիկտի 2016 և 2020 թթ. պատերազմական գործողություններին ի արձագանք ձևավորված կամավորական շարժումներում քաղաքացիական անձանց ինքնաներգրավման որոշման հիմքում կենտրոնական նշանակություն ունեն կոլեկտիվ զգայական դրդապատճառները, որոնք հաճախ առավել զգալի դեր են խաղում, քան նյութական կամ ռացիոնալ դրդապատճառները: Ընդ որում՝ տվյալների վերլուծությունը թույլ է տալիս տիպաբանել և մեկնաբանել սոցիալական մոբիլիզացման գործընթացին քաղաքացիական մասնակցության արժեքային և ռացիոնալ շարժառիթները, և տեսությունների դեդուկտիվ ստուգման ճանապարհով

վավերացվել են Է. Վուդի՝ կոլեկտիվ գործողության դրդապատճառները տեսաբանող հասարակագիտական հայեցակարգում առաջարկվող դրույթները:

4. Ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների համատեքստում սոցիալական մոբիլիզացումն ըմբռնելուն և մեկնաբանելուն ուղղված եռաստիճան հասկացութային հայեցակարգի մշակման արդյունքում՝ համապարփակ պատկերացում կարելի է կազմել միկրո-մեզո-մակրո չափումներում դիտարկելի խմբային և կառուցվածքային այն գործոնների վերաբերյալ, որոնք պայմանավորում և վերարտադրում են սոցիալական մոբիլիզացումը: Մասնավորապես՝ մակրոկառուցվածքային պայմանները, ինչպիսիք են շարունակական հորիզոնական անհավասարությունները, քաղաքական մեկուսացումը և երկարատև անարդարությունները, ինչպես նաև խմբային մակարդակում պատմական դժգոհությունները, հիմք են հանդիսանում կոլեկտիվ դժգոհությունների ձևավորման համար: Վերջիններս իրենց հերթին հանգեցնում են անարդարությունը սահմանող, ֆրեյմավորող և քաղաքականացնող սոցիալական պատումների («մեզ հետ անարդարություն է գործել X-ը»), որն ամրապնդվում է մեզո մակարդակում խմբային ինքնության ընդգծման և խմբային համերաշխության ուժգնացման միջոցով («մենք ղարաբաղցի հայեր ենք, որոնք պաշտպանում են իրենց իրավունքները»): Վերջիններիս զուգընթաց՝ անհատները խմբի փորձառությունը ներքնայնացնում են որպես իրենց սեփական արժեքների մաս, ինչը միկրոփորձառությունների մակարդակում հարմար պայմաններ է ստեղծում անհատական բարոյահոգեբանական դրդապատճառների ձևավորման համար՝ խրախուսելով անհատենրի մասնակցությունը սոցիալական մոբիլիզացմանը և, ըստ էության, խարսխելով մասնակցության ուղղակի խթանները: Միկրո-մեզո-մակրո մակարդակի փոխառնչակցությունների սինթեզումը հուշում է, որ Ղարաբաղյան կոնֆլիկտի տարբեր փուլերում դիտարկվող սոցիալական մոբիլիզացման դրվագներն ինքնավերարտադրությունն են ի սկբանե անկախության համար և անհավասարությունների դեմ ձևավորված շարժման, որի կողմից թիրախավորվող խնդիրների լուծման բացակայության դեպքում տարածքային մեկուսացումը, անվտանգության երկընտրանքները և միջէթնիկական անվստահությունը շարունակում են մոբիլիզացման գիտելիքը փոխանցել սերնդեսերունդ և հող նախապատրաստել հետագայում կոնֆլիկտային գործողությունների վերարտադրման համար:

Ատենախոսության արդյունքների ամփոփումն արտացոլում է սոցիալական մոբիլիզացման հիմքում ընկած խմբային և կառուցվածքային գործոնների միաձուլումը բազմաչափ շղթայական մոդելում, որում ներկայացված օրինաչափությունը, չնայած էմպիրիկ առումով հիմնվում է մեկ տիպական դեպքի վրա, սակայն կարող է կիրառելի լինել այլ ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների համատեքստում ևս, նույնիսկ եթե այդ կոնֆլիկտները իրենց հիմնարար տեսակով ներպետական են, այլ ոչ միջպետական, ինչպես Ղարաբաղյան կոնֆլիկտը: Առաջարկվող հասկացութային հայեցակարգումն, ըստ էության, կարող է օգտագործվել որպես էվրիստիկ օրինակ՝ ձգձգված կոնֆլիկտների համատեքստում հասարակական դինամիկաները վերլուծելու համար:

Ատենախոսության արդյունքները ներուժ ունեն խորացնելու ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների շուրջ և դրանց համատեքստում սոցիալական մոբիլիզացման վերաբերյալ գիտական գիտելիքը կոնֆլիկտի սոցիոլոգիայում:

Արդյունքները տեսական և գործնական պատկերացումներ են առաջարկում գիտնականների, քաղաքականություն մշակողների և կոնֆլիկտների կարգավորման մասնագետների համար, ովքեր ձգտում են ըմբռնել կոնֆլիկտների ժամանակ ձևավորվող հանրային տրամադրությունների և կոլեկտիվ վարքի յուրահատկություններն ու դրանք պայմանավորող հանգամանքները: Ի վերջո, դրանք կիրառելի են նաև քաղաքականության ձևավորման, խաղաղաշինության և համայնքային զարգացման ոլորտներում: Մասնավորապես, մոբիլիզացման սոցիալական դրսևորումների քննումը կարող է հնարավորություն տալ բացահայտելու, թե հասարակական որ ենթահամակարգերում է ձևավորվում և պահպանվում սոցիալական համախմբումը, և որտեղ կարող է մեղմող կամ զորեղացնող քաղաքականությունների կամ խաղաղաշինական միջամտությունների կարիք լինել:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Smbatyan, H.** (2025). Conflict-Driven Mobilization in Protracted Conflict: A Multi-Level Conceptual Synthesis from the Karabakh Case. *Journal of Sociology: Bulletin of Yerevan University*, 16(1(41), 99-112. doi:10.46991/BYSU.F/2025.16.1.099.
2. **Smbatyan, H.** (2025). From civic mobilization to armed struggle: Tracing the roots of the Nagorno-Karabakh conflict. *Intersections. East European Journal of Society and Politics*, 10(3), 154–178. doi:10.17356/ieejsp.v10i3.1121.
3. **Smbatyan, H.** (2022). Nagorno-Karabakh Conflict Through the Prism of Horizontal Inequalities: Theoretical Overview. *Journal of Sociology: Bulletin of Yerevan University*, 13(1), 5-23. doi:10.46991/BYSU:F/2022.13.1.005.
4. **Smbatyan, H.** (2021). Civilian Participation in Interstate War: Unfolding Voluntary Collective Action in Nagorno-Karabakh War. *Pax et Bellum Journal*, 4(1), 57-69. Առբերված է https://bit.ly/3uyuf4V-ից
5. **Smbatyan, H.** (2020). Challenging the Reality-Conception Split in Conflict Studies: Participatory Methodologies Under Focus. *Journal of Global Development and Security Studies*, 127-155. Առբերված է https://shorturl.at/WztEc-ից
6. **Սմբատյան, Հ.** (2018). Արցախյան կամավորական շարժման սոցիոլոգիական իմաստավորումը Քառօրյա պատերազմի համատեքստում. *ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու*, 262-270. Առբերված է https://bit.ly/2Yc02wl-ից:

Смбатян Айк Ашотович

СОЦИАЛЬНАЯ МОБИЛИЗАЦИЯ В КОНТЕКСТЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА: СОЦИОЛОГИЧЕСКАЯ КОНЦЕПТУАЛИЗАЦИЯ ГРУППОВЫХ И СТРУКТУРНЫХ ФАКТОРОВ

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.01 - «Методология, теории социологических исследований, социальные технологии и процессы». Защита состоится 11-го февраля 2026 года в 15:00 на заседание специализированного совета Философии и социологии 013 КВОН РА, по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна, 52а, Ереванский государственный университет.

Резюме

В данной диссертации исследуется, как социальная мобилизация возникает и воспроизводится в контексте затяжных и трудноразрешимых конфликтов, на примере Нагорно-Карабахского конфликта. Вместо того, чтобы рассматривать социальную мобилизацию как эпизодическое или событийное явление, исследование концептуализирует её как многоуровневый, самовоспроизводящийся социальный процесс, который постепенно становится нормативным сценарием в обществах, живущих в условиях длительного насильственного конфликта.

В эмпирическом плане диссертация фокусируется на восходящих формах социальной мобилизации в армянском обществе, связанных с Нагорно-Карабахским конфликтом: Карабахском движении 1988 года, а также волонтерских движениях, возникших в ответ на Четырехдневную войну 2016 года и Вторую Карабахскую войну 2020 года. Социальная мобилизация определяется как высокорискованное коллективное действие, ориентированное на общую цель, возникающее спонтанно снизу, а не организованное формальными институтами. Это определение намеренно исключает мобилизацию «сверху вниз» (например, осуществляемую военными, государственными органами или НПО в гуманитарных целях), сосредоточиваясь вместо этого на коллективном участии граждан.

Исследование построено в рамках интерпретативной социологии, отдавая приоритет прояснению процессов смыслообразования, а не строгому каузальному измерению. Методологически оно сочетает в себе методы анализа конкретных случаев и историко-сравнительного анализа. Эмпирическую базу составляют 19 углубленных и 11 нарративных интервью с участниками движения и волонтёрами, а также 120 вторичных источников, включая исторические свидетельства, исследования по социальным наукам, отчёты, архивные материалы и медиаконтент. Анализ использует интерпретативный тематический анализ и отслеживание процессов для реконструкции механизмов, связывающих структурные условия, коллективные смыслы и индивидуальную мотивацию в различных эпизодах мобилизации.

В теоретическом плане диссертация синтезирует структурно-институциональный и культурно-символический подходы к социальным движениям и коллективным действиям. В нём обсуждаются перспективы политических возможностей,

мобилизации ресурсов и горизонтального неравенства с теориями фрейминга, коллективных эмоций, идентичности и памяти. На этой основе разрабатывается трёхуровневая концептуальная структура, которая объединяет мотивацию и жизненный опыт на микроуровне, групповую идентичность и эмоционально-нормативную динамику на мезоуровне, а также макроуровневые модели неравенства и исключения.

Анализ показывает, во-первых, что Карабахское движение 1988 года можно понять через механизм, связывающий горизонтальное неравенство с относительной депривацией, коллективным недовольством, присоединением к мобилизации и последующей стабилизацией социальной мобилизации. Во-вторых, анализ волонтерских движений 2016 и 2020 годов показывает, что гражданское участие в условиях высокого риска в первую очередь обусловлено коллективными эмоциональными и моральными мотивами, такими как долг, преданность, горе и надежда, которые порой перевешивают материальные или узко рациональные расчёты. В ходе различных эпизодов мобилизация закрепляется в нарративах, символах и памятных практиках, которые трактуют конфликт как борьбу за справедливость, безопасность и достоинство.

Исходя из этого, в диссертации выдвигается онтологическое утверждение: в обществах, подверженных длительному насильственному конфликту, сам конфликт становится структурирующей средой социальной реальности, а не исключительным нарушением нормальности. В таких условиях социальная мобилизация, инициированная снизу, постепенно превращается в нормативное социальное правило, готовый сценарий социального действия, передаваемый из поколения в поколение через институциональные и неформальные каналы памяти. Эта модель среднего уровня предлагает основанное на механизмах объяснение того, как и когда затяжной, трудноразрешимый конфликт может трансформироваться в устойчивое социальное состояние, постоянно воспроизводящее потенциал новых волн мобилизации.

Полученные результаты углубляют социологическое понимание социальной мобилизации в обществах, затронутых конфликтом, и предоставляют концептуальную основу, которую можно адаптировать для проверки на других случаях затяжного конфликта. В то же время результаты имеют практическую значимость для разработки политики, построения мира и развития сообществ, поскольку проясняют, где, как и посредством каких социальных подсистем воспроизводится мобилизация и где вмешательства, преобразующие конфликт, могут быть потенциально наиболее эффективными.

Smbatyan Hayk Ashot

SOCIAL MOBILIZATION IN THE CONTEXT OF THE KARABAKH CONFLICT: SOCIOLOGICAL CONCEPTUALIZATION OF GROUP AND STRUCTURAL FACTORS

Dissertation submitted for receiving academic degree of the doctor of sociology under the speciality 22.00.01 – "Methodology, theories of sociological research, social technologies and processes". The public defense of the dissertation will take place on February 11, 2026, at 15:00 at the session of HESC «Philosophy and Sociology» Specialized Council 013 based in Yerevan State University. Address: 0025, Yerevan, 52a Abovyan St., YSU.

Summary

This dissertation investigates how social mobilization emerges and is reproduced in the context of protracted and intractable conflicts, using the Nagorno-Karabakh conflict as an empirical case. Rather than treating social mobilization as an episodic or event-bound phenomenon, the study conceptualizes it as a multi-level, self-reproducing social process that gradually becomes a normative script in societies living with long-term violent conflict.

Empirically, the dissertation focuses on bottom-up forms of social mobilization in Armenian society related to the Nagorno-Karabakh conflict: the 1988 Karabakh Movement, as well as volunteer movements formed in response to the 2016 Four-Day War and the 2020 Second Karabakh War. Social mobilization is defined as high-risk collective action oriented toward a shared goal, arising spontaneously from below rather than being orchestrated by formal institutions. This definition deliberately excludes top-down mobilizations (e.g., by the military, state agencies, or NGOs for humanitarian purposes), focusing instead on citizen-driven collective engagement.

The study is situated within an interpretive sociological framework, prioritizing the clarification of meaning-making processes over strict causal measurement. Methodologically, it combines case study and historical-comparative approaches. The empirical base consists of 19 in-depth and 11 narrative interviews with movement and volunteer participants, alongside 120 secondary sources, including historical accounts, social science studies, reports, archival materials, and media content. The analysis employs interpretive thematic analysis and process tracing to reconstruct mechanisms that link structural conditions, collective meanings, and individual motivations across different episodes of mobilization.

Theoretically, the dissertation synthesizes structural-institutional and cultural-symbolic approaches to social movements and collective action. It brings into dialogue perspectives on political opportunities, resource mobilization, and horizontal inequalities with theories of framing, collective emotions, identity, and memory. On this basis, it develops a three-tier conceptual framework that integrates micro-level motivations and life experiences, meso-level group identities and emotional-normative dynamics, and macro-level patterns of inequality and exclusion.

The analysis showcase, first, that the 1988 Karabakh Movement can be understood through a mechanism linking horizontal inequalities to relative deprivation, collective

grievance, joining mobilization, and eventual stabilization of social mobilization. Second, the analysis of the 2016 and 2020 volunteer movements demonstrates that civic participation in high-risk contexts is centrally driven by collective emotional and moral motivations, such as obligation, loyalty, grief, and hope, which at times outweigh material or narrowly rational calculations. Across episodes, mobilization is anchored in narratives, symbols, and commemorative practices that frame conflict as a struggle for justice, security, and dignity.

On this basis, the dissertation advances an ontological claim: in societies exposed to long-term violent conflict, conflict itself becomes a structuring environment of social reality rather than an exceptional disruption of normality. Under such conditions, bottom-up social mobilization gradually turns into a normative social rule, a ready-made social action script transmitted across generations through institutional and informal channels of memory. This middle-range model offers a mechanism-based explanation of how and when protracted, intractable conflict can transform into a durable societal condition that continually reproduces the potential for new waves of mobilization.

The findings deepen sociological understandings of social mobilization in conflict-affected societies and provide a framework that can be adapted to tested against other cases of protracted conflict. At the same time, the results hold practical relevance for policy-making, peacebuilding, and community development by clarifying where, how, and through which social sub-systems mobilization is reproduced, and where conflict-transformative interventions might potentially most effectively be targeted.